

Կոստանդին Գ թէ՛ երկիրը նորանոր խլրատումներէ ազատ պահելու եւ թէ իր թագաւորութիւնն երկարատեւ ընելու համար՝ ամենէն առաջ Գուխտնի ողջ մնացած ազգակոսններէն մէկ մասը բանտարկեց , իսկ մաս մըն ալ հեռացուց մայրաքաղաքէն :

Որովհետեւ Գուխտն մանչ զաւակ չունէր , այլ իզագել կամ Զապել անունով աղջիկ մը միայն , զահին ժառանգութիւնը կը մնար իր եղբոր՝ Զուանի որդիներուն : Ուրեմն Կոստանդին զխաւոր բանտարկեալներն էին հետեւեալ երկու թագաժառանգ որերը , — Պեմունդ՝ 5 տարեկան , եւ Լեւոն՝ 2 տարեկան , որոնց հայրը գեռ նոր մեռած էր (1344 օգոստ . 17) եւ որոնք կը խնամուէին իրենց մօրը քով , որ իր կարգին իր զաւակներուն հետ Կոստիկոսի բերդն առաջնորդուեցաւ :

Կոստանդին վերջին տարիներուն , հակառակ որ երկար ժամանակէ ի վեր խաղաղութիւնը հաստատուած էր երկրին մէջ , միծամիծ դժբախտութիւններու հանդիսաւայր դարձաւ Կիլիկիան . վասն զի ո՛չ միայն կաթոլիկ տարրն սկսած էր նորէն զօրանալ եւ կրօնական ատելութեան սերմը ցանել թէ՛ հասարակ ժողովրդին եւ թէ իշխաններուն մէջ , այլ եւ արտաքին թշնամիներն ալ սկսած էին ամէն կողմէ յարձակիլ Կիլիկիայի վրայ եւ գրաւել մի քանի կարեւոր քաղաքներ ու բերդեր : Երկրին ներսերը թիւրք-մէջներէ գրաւուած էին . իսկ հարաւային մասն ու ծովեզերքի հայկական ամրութիւններն ամբողջովին անցած էին եգիպտացիներու ձեռքը , բացառութիւն կազմելով Կոստիկոսը , որ սակայն առանձնացած՝ յուսահատական զիմադրութիւններու մասնուած էր : Կոստանդին իր բոլոր ուժը տուած էր մայրաքաղաքին պաշտպանութեան , — թէեւ անյաջող , — եւ Կապանի ու Բարձրբերդի տէրերուն հրամայած էր արթուն կենալ եւ արգիլել թշնամիին մօտենալը , քանի որ չէր կրնար՝ ճամբաներու բռնուած ըլլալուն պատճառով՝ օգնութեան հասնիլ Կոստիկոսի պաշարուածներուն : Ծովեզերքի հետ բոլորովին կտրուած էին յարաբերութիւնները (1) :

(1) Աբու'լ-Մեհսին եգիպտական բանակին արեւանքն այսպէս կը պատմէ . « 760-ին (=1359) Հալէբ գաւառին կուսակալութիւնը յանձնուեցաւ ամր Սայֆեդդին Բեյբեմուր էլ-Խարեզմիին : Յաջորդ տարին արեւեց Կիլիկիայի վրայ . նուաեց Սիսը , որ անձնատուր եղաւ , եւ սիրապետեց Արամայի ու Տարսոնի , ինչպէս նաեւ Կելալ-ի , Դիլիուկ-ի եւ Զուդեյդա-ի(\*)

(\*) Զեռագիրն ունի՝ էլ-Հուդեյդա :